ՀՏԴ 821.133.1-93 Պերրո
ԳՄԴ 84(4Ֆր)-4
Պ 530

Անգլերենից թարգմանեց
Տիրուհի Նազարեթյանը

Էջադրող՝ Նարինե Հովհաննիսյան
Տեխն. խմբագիր՝ Հեղինե Մեդոյան

© ԽԱՍՏ, 2021
© Բուկինիստ, 2023

ISBN 978-9939-66-375-3

bookinist

Կար-չկար մի խելոք աղջիկ կար, որն ապրում էր անտառի մոտի գյուղում: Նա իրենց գյուղի ամենագեղեցիկ աղջիկն էր: Փոքրիկ սիրունիկ աղջիկը ինքնուրույն էր հագնվում՝ կարմիր թիկնոց, կարմիր գլխարկ, որ տատիկն էր գործել նրա համար: Եվ այդ պատճառով էլ բոլորը նրան Կարմիր Գլխարկ էին անվանում:

– Սիրելի՛ս, տատիկդ հիվանդացել է, նրան այցելության գնա,– մի օր ասում է մայրիկը և զամբյուղով կարկանդակներ ու կարագ տալիս աղջկան, որպեսզի տանի տատիկին:

– Շատ լավ, մայրի՛կ,– ասում է Կարմիր Գլխարկը:

– Հիշի՛ր, ուղիղ տատիկիդ տուն կգնաս,– պատվիրում է մայրը,– ճանապարհին այս ու այն կողմ չընկնես և անծանոթների հետ չխոսես:

– Հանգիստ եղիր, մայրի՛կ, ուշադիր կլլինեմ,– ասում է Կարմիր Գլխարկը:

– Ո՞վ է,– հարցնում է գայլը՝ ձայնը փոխելով:

– Կարմիր Գլխարկը՝ քո սիրելի թոռնիկը,– պատասխանում է աղջիկը:

– Ներս արի, սիրելի՛ս,– ասում է գայլը:

Կարմիր Գլխարկը ներս է մտնում:

Մի քիչ էլ է կտրում, և աղջնակը դուրս է թռչում գայլի փորից: Հետո մի քիչ էլ է կտրում, և տատիկն էլ է դուրս գալիս գայլի փորից ողջ ու առողջ: Խեղճ կինը, ճիշտ է, ուժասպառ էր եղել, բայց կարևորը, որ կենդանի էր մնացել:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark